



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

*ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՅԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ*

*ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ*

Հետազոտության թեման՝ Ը ն տ ա ն ի ք ի հ ո գ ե ր ա ն ու թ յ ու ն. Կ ո ն ֆ լ ի կ տ ն ե ր

Առարկան՝ Անգլերեն

Հետազոտող ուսուցիչ՝ Մարինե Բաղալյան

Ուսումնական հաստատություն՝ 112 ա վ ա գ դ պ ը ո ց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐ.....	5
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ.....	13
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել ընտանիքում երեխաների դաստիարակության արդյունավետ և ճիշտ կազմակերպման մեթոդները, դաստիարակության հոգեբանամանկավարժական ընդհանուր պայմանների, ծնողական հեղինակության, երեխաների բարոյական, աշխատանքային, գեղագիտական, ֆիզիկական, սեռական դաստիարակության և շատ այլ հուզող հարցերի հստակ պատասխանների և գործնական հետևությունների լույսի տակ:

Ընտանեկան դաստիարակության վերաբերյալ աշխատությունների, հոդվածների, էլույթների, դասախոսությունների հարուստ ժառանգություն ունենք սկսած 50-ական թվականներից: Այդ աշխատությունները կարելի է դասել հազվագյուտ գրքերի շարքը, որովհետև դրանք իսկական ուղեցույց են նաև հիմա՝ հազարավոր ծնողների, ուսուցիչների, մանկավարժների, դաստիարակների համար: Հասունացող սերնդի կրթության, նրա քաղաքական, բարոյական, գեղագիտական, ֆիզիկական դաստիարակության հարցը դրվում է ոչ միայն դպրոցի, ընտանիքի այլև ամբողջ հասարակության վրա: Ինչքան էլ մեծ լինի դպրոցի դերը, մարդու բնավորության հիմքերը, կենսական ելակետային հակվածությունները դրվում են ընտանիքում: Դպրոցը տալիս է գիտելիքի որոշակի պաշար, բայց մեծագույն արժեքները՝ սերը, հոգատարությունը, հարգանքը, իրար աջակցելը, զիջելը, աշխատանքի և վարվելակերպի բարձր կուլտուրան իր արմատները գցում է ընտանիքում:

Երեխայի բնավորության հիմքերը, նրա վերաբերմունքը ելակետային հարցերի շուրջ, նրա ճիշտ ընկալումը դպրոցի, ուսուցչի, ուսման, հանրօգուտ աշխատանքի մասին չի կարող տալ դրական արդյունք, եթե դպրոցը ներշնչի մի բան, իսկ ընտանիքը՝ մի այլ բան: Այստեղ առաջնակարգ նշանակություն է ստանում ծնողների մանկավարժական լուսավորության խնդիրը: Շատ ծնողներ դա կապում են նյութական ապահովվածության հետ: Դա սխալ տեսակետ է, որովհետև շատ հարուստ ընտանիքներում էլ այդ հարցը լուծված չէ: Երկու կարգի ընտանիքներում էլ խոտանի երկու տոկոսը մոտավորապես հավասար է: Այդ ամենը կախված է ծնողական հոգատարությունից և ծնողական ուշադրությունից: Անհրաժեշտ է

սիստեմատիկորեն զբաղվել երեխաների դաստիարակությամբ, ներկայացնել նրան որոշակի պահանջներ, պարտականություններ և մշտապես հետևել դրանց կատարմանը: Երեխաները մեր ապագա քաղաքացիներն են, նրանք պետք է շարունակեն մեր պատմությունը: Նրանք վաղվա հայրերն ու մայրերն են. Նրանք նույնպես իրենց երեխաների դաստիարակները պիտի լինեն: Մեր երեխաները նաև մեր երջանիկ ծերությունն են, իսկ վատ դաստիարակությունը մեր վաղվա դժբախտությունն է, վիշտն ու արցունքները, վաղվա վատ քաղաքացին ու ծնողը: Ուրեմն պետք է հիշենք այս գործի հսկայական կարևորության մասին, այս գործի համար մեր մեծ պատասխանատվության մասին: Մեր ուսումնասիրությունը ունի արդիական նշանակություն, քանի որ լիարժեք քաղաքացի դաստիարակելը մնում է մեր երկրի, պետության համար առաջնային խնդիրը, որովհետև պետության ամենափոքր օղակը մնում է ընտանիքը: Ընտանիքի ամրությունից է կախված մեր պետականության, երկրի ամուր, ուժեղ, հզոր լինելը:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ԿՈՆՖԼԻԿՏԵՐ

Երեխային ճիշտ ու նորմալ դաստիարակելն անհամեմատ ավելի հեշտ է, քան վերադաստիարակելը: Ամենավաղ մանկությունից սկսած ճիշտ դաստիարակությունը այնքան էլ դժվար գործ չէ, եթե դա ծնողի համար սիրելի, հաճելի ու երջանիկ գործ է: Ամեն մի երեխա ավելի լավ դաստիարակություն է ստանում, եթե ծնվել է երջանիկ ընտանիքում, ունի լավ, պատասխանատու ծնողներ, հոգատարության ու ուշադրության կենտրոնում է գտնվում, որտեղ բոլորը հարգում են իրար, սիրում են, սատարում են նեղության պահին: Եվ այս ամենը անում են ոչ թե խոսքով ու խրատով, այլ դաստիարակում են սեփական օրինակով, սեփական վարքագծով ու վերաբերմունքով: Բոլորովին այլ բան է, երբ մենք բաց ենք թողել ճիշտ պահը, ծուլացել ենք, երեխային անուշադրության ենք մատնել՝ օրեկտիվ և սուբեկտիվ պատճառներով՝ այս դեպքում շատ բան հարկավոր է լինում շտկել, փոխել, ուղղել:

Վերադաստիարակելը այնքան էլ հեշտ ու դյուրին գործ չէ: Դա պահանջում է մեծ աշխատանք, գերլարված ուժեր, ավելի շատ գիտելիքներ ու փորձ և շատ մեծ համբերություն, որը ծնողը չունի: Երբեմն ծնողները գլուխ չեն հանում վերադաստիարակության դժվարություններից և ստիպված այդ գործը թողնում են դպրոցին ու ուսուցչին: Անհաջող ընտանիքում մեծացած երեխային վերափոխելը դառը աշխատանք է: Դա քայքայում է ծնողի նյարդերը, փչացնում ընտանիքի անդամների հարաբերությունները, ընտանիքում ստեղծվում է լարված մթնոլորտ, ծնողները մեղադրում են մեկմեկու և հանգուցալուծում չեն գտնում: Ավանդական ընտանիքներում, երբ երեխաները ապրում էին տատիկների ու պապիկների հետ, յուրաքանչյուր անդամ ուներ իր պարտականությունները, իր գործը, հայրը ուներ ավելի շատ իշխանություն, նա պատասխանատու էր ամբողջ ընտանիքի համար, պետք է ապահովեր սննդով, ապրուստով, պաշտպաներ ընտանիքը արտաքին վտանգից, ղեկավարեր տնտեսությունը և նրա խոսքը որոշիչ էր ու կարևոր: Հայրը պատասխանատու էր ծեր ծնողների խնամքի համար:

Այսօր փոխվել է ընտանիքների կազմը: Ընտանիքը դադարել է հայրական լինելուց: Մեր երկրում կինը նույնպես հավասար իրավունքներ ունի: Նա աշխատում

է կյանքի բոլոր բնագավառներում, զբաղեցնում է բարձր պաշտոններ, ստանում է բարձր աշխատավարձ, ավելի ազատ է իր որոշումներում, երբեմն առաջնային է դառնում կարիերան, որից տուժում է ընտանիքը: Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ մեծացել է ամուսնալուծված ընտանիքների թիվը: Երեխայի դաստիարակության վրա շատ հիվանդագին է անդրադառնում ծնողների միասին չապրելը, երբ նրանք բաժանվել են իրարից, որովհետև հաճախ երեխաները դառնում են վեճի առարկա ծնողների միջև, որոնք բացահայտորեն ասում են իրար, վիրավորում են իրար և դա չեն թաքցնում երեխաներից: Ծնողները իրենց վեճերի և տարաձայնությունների ժամանակ պետք է մտածեն երեխաների մասին և հարցերը լուծեն ավելի քաղաքակիրթ ձևով: Ընտանեկան վեճերը, հակակրանքը ու ասելությունը խորը հետք են թողնում երեխայի հոգեվիճակի վրա և դպրոցում երեխան չի կենտրոնանում դասի ու դասապրոցեսի վրա: Նա դառնում է ներվային, ագրեսիվ, հուզական, երկյուղած, անտարբեր, բացակայում է դասերից, քանի որ դուրս է մնացել ծնողական ուշադրությունից: Ծնողները չգիտեն որտեղ է երեխան, ինչով է զբաղված, ովքեր են շրջապատում նրան, ինչպիսի վնասակար ու գայթակղիչ ազդեցությունների է բախվել: Իսկ մեր ժամանակներում դրանք բազմաթիվ են՝ սկսած բջջային հեռախոսներից, վտանգավոր սոցցանցերից, գայթակղիչ առաջարկներից, խափուսիկ գովազդներից:

Շատ ծնողներ սիրում են բողոքել ժամանակի սղությունից: Եվ դա իսկապես այդպես է: Շատերը աշխատում են անկայուն աշխատանքային գրաֆիկով, ուշ են վերջացնում, քանի որ մասնավոր սեկտորը ունի իր պայմանները, ամբողջ օրը տանը չեն, երեխաները հսկողությունից դուրս են մնում և բախվում է կյանքի բազմազան ազդեցություններին: Սա չի նշանակում, որ մենք պետք է վախկոտներ կամ անվճռական մարդիկ ձևավորենք: Միևնույն է, կյանքում նա ստիպված պիտի լինի բախվել զանազան բարդ իրավիճակների հետ: Նա պիտի գլուխ հանի դրանցից, պայքարի դրանց դեմ, լինի բազմազան իրավիճակներում, բայց դա չի նշանակում ջերմոցային դաստիարակություն: Անհրաժեշտ է երեխային ժամանակին օգնել, ուղղություն տալ, մշտապես ուղղումներ մտցնել երեխայի կյանքում: Դաստիարակության համար ոչ թե շատ ժամանակ է հարկավոր, այլ քիչ ժամանակի

խելացի օգտագործում: Դաստիարակությունը տեղի է ունենում միշտ, նույնիսկ այն ժամանակ, երբ մենք տանը չենք: Մեր սեփական վարքը ամենավճռական բանն է: Մենք երեխային դաստիարակում ենք ոչ միայն այն ժամանակ, երբ զրուցում ենք հետը, սովորեցնում կամ հրամայում ենք: Մենք նրան դաստիարակում ենք մեր կյանքի յուրաքանչյուր պահին. Թե ինչպես ենք հագնվում, ինչպես ենք ուտում, ինչպես ենք խոսում ուրիշների հետ, ինչպես ենք ուրախանում կամ ծիծաղում, ինչպես ենք վերաբերում մեր ծեր ծնողներին, մեր բարեկամներին կամ թշնամիներին, ինչպիսին է մեր վերբերմունքը դպրոցի ու ուսուցչի նկատմամբ՝ այս ամենը մեծ և կարևոր նշանակություն ունի երեխայի համար: Նա ամեն ինչ տեսնում է, զգում է, նկատում է անտեսանելի ճանապարհներով, իսկ մենք այդ չենք նկատում և նույնիսկ ամենալավ խորհուրդներն ու մեթոդները չեն օգնում:

Դաստիարակության առաջին և ամենագլխավոր մեթոդը՝ ծնողական պահանջն է իր նկատմամբ, ծնողական հարգանք իր ընտանիքի նկատմամբ, ծնողական վերահասկողություն ամեն մի քայլի համար: Բայց պատահում են ծնողներ, որոնք կարծում են, որ կա հատուկ դեղատոմս երեխային դաստիարակելու համար, որը հրաշքներ կգործի և կունենան հրաշք երեխա: Հրաշքներ չեն լինում, եթե ծնողը ինքը դաստիարակության կարիք ունի և թերանում է իր գործում: Շատերը տարբեր ձեռնածություններ են անում՝ համարելով դա ճիշտ մեթոդ. յուրահատուկ պատիժ են հնարում, պարզն են խոստանում, կաշառում են նվերներով, կատարում են նրանց բոլոր ցանկությունները, մտածելով, որ երեխան հետ կմնա իր շրջապատից: Բայց դա խանգարում է տեսնել իրական խնդիրները: Երեխան արագ ընտելանում է թեթև կյանքին, դառնում է անհոգ, մեծամիտ, պարծենկոտ, չափից ավելի ընտելանում է մեծահասակների շրջապատին և նրա հոգեկան աճը չափազանց արագ է կատարվում: Ծնողները սիրում են պարծենալ դրանով, սակայն հետո համոզվում են , որ սխալ են թույլ տվել:

Միայն այն ընտանիքներում, որտեղ մի քանի երեխաներ են մեծանում, ծնողական հոգատարությունը կարող է նորմալ բնույթ կրել: Այդ հոգատարությունը հավասարաչափ բաշխվում է բոլորի միջև: Մեծ ընտանիքում երեխան վարժվում է կոլեկտիվին, ձեռք է բերում փոխադարձ կապերի փորձ, սեր և ընկերություն է

սահմանվում ընտանիքի անդամների միջև, երեխան վարժվում է մարդկային հարաբերությունների զանազան ձևերին ու խնդիրներին, օգնելու, փոխանակելու, սատարելու, աջակցելու սովորություններին: Այսինքն դաստիարակչական աշխատանքը ամենից արագ կազմակերպչական աշխատանք է և այդ գործի մեջ մանրուքներ չկան: Մանրուքները գործում են ամեն օր, ամեն ժամ, նրանցից էլ կազմվում է կյանքը: Ղեկավարել այդ կյանքը, կազմակերպել այն՝ հենց սա է ամենակարևոր և պատասխանատու խնդիրը: Այդ խնդիրն ճիշտ լուծում տալու համար ծնողը պետք է հեղինակություն ունենա երեխայի աչքում: Այդ հեղինակությունը ծնվում է շատ վաղ տարիքից, երբ ծնողը դառնում է անկասկածելի մեծ արժեքներ կրողը, նրա ուժը, խոսքը, պահվածքը ապացույցներ չեն պահանջում, որովհետև նա ծնողին նայում է մանկական հասարակ աչքերով: Շատ ծնողներ այդ հեղինակությունը ստեղծում են կեղծ հիմունքներով, ստիպում են , որ երեխան լսի իրենց, լինի հնազանդ, նրա փոխարեն կայացնում են որոշումներ և ուղղորդում են նրան: Նման ծնողները հանգիստ ապրում են , շարժելով մյուսների նախանձը, բայց չեն գիտակցում, որ մեծացնում են հնազանդ, թուլական, անվճռական քաղաքացի: Ծնողների մյուս տեսակը ընտրում է ճնշման հեղինակությունը, հարկի ու անկարկի կոպտում է երեխային, շարունակ մռնչում է տանը, դժգոհում է, հայհոյում է, թերագնահատում է երեխային, չի հարգում նրա մորը: Նման հեղինակությունը շատ վտանգավոր է. դա առաջ է բերում մանկական ստախոսություն, երկչոտություն նաև դաժանություն: Ընկճված ու կամազուրկ երեխան դառնում է թուլամորթ, ոչ պիտանի մարդ և ամբողջ կյանքի ընթացքում վրեժխնդիր է լինում իր ճնշված մանկության համար: Մեր օրերում կան մայրեր, որոնք ունեն իրենց ուրույն կյանքը, իրենց շահերը, իրենց նպատակները, կարիերան և երեխաները մեծանում են տատիկի կամ տնային աշխատողի հսկողության տակ: Շատ մայրեր չեն կարողանում զբաղվել երեխաների դաստիարակությամբ օբեկտիվ պայմաններից ելնելով: Մասնավոր սեկտորն ունի իր պայմանները և չենթարկվել նշանակում է վտանգի տակ դնել աշխատանքը: Երեխան ամբողջ օրը մնում է մենակ, ինքնուրույն տնօրինում է իր օրը և դասապատրաստումը սկսում է երեկոյան, երբ մայրը տանն է, բայց երեխան արդեն հոգնած է և տնային աշխատանքը դառնում է թերի ու ոչ կարևոր:

Որոշ ընտանիքներում ծնողները համոզված են հետևյալում. որպեսզի կոնֆլիկտներից խուսափել պետք է նրանց հետ քիչ շփվել, քիչ խոսել, չխառնվել նրանց գործերին, ֆինանսավորել անհրաժեշտության դեպքում: Սա կոչվում է հեռավորության հեղինակություն, ուր ոչ մի օգուտ չի տալիս երեխայի դաստիարակությանը:

Մեր օրերում քիչ չեն ապահովված ընտանիքները, որոնք կարևորում են իրենց դիրքը հասարակության մեջ, ամեն քայլափոխի ցուցադրում են իրենց, իրենց երեխաներին, ամեն ինչ ուռճացնում են՝ պարծենալու և մյուսներից տարբերվելու համար: Ծնողների այդպիսի վարքով երեխաները սկսում են հանդես գալ գոռոզ խոսքերով, ամեն քայլափոխի կրկնելով, որ իրենց հայրիկը ամենակարողն է և ամենաճանաչվածը: Նրանք սովորում են ավելի հեղինակավոր դարձնելու, օգտվում են տարբեր վճարովի ծառայություններից, հաճախում են տարբեր վճարովի խմբակներ, ունեն անձնական վարորդներ: Սա կոչվում է սնապարծության հեղինակություն, որը պակաս վտանգավոր չէ:

Մենք շատ ենք սիրում մեր երեխաներին, անգամ եթե դա այդպես չէ. փորձում ենք նրա համար ստեղծել ամենալավ պայմանները, ուզում ենք, որ նրանք ապրեն մեր ուզած ձևով, սկսում ենք երկար ու ձանձրալի քարոզներ կարդալ, տաղտկալի ճառեր ասել, խրատներով ու խորհուրդներով կառավարել նրա կյանքը: Բայց երեխան ավելի զգայուն է, ավելի բուռն է արձագանքում տեսածին ու լսածին, քիչ է կարողանում դատողություններ անել: Ինքնուրույն մտածելու կարողությունը արմատանում է հետզհետե և բավական դանդաղ, իսկ ծնողների անընդհատ շատախոսությունը, խրատները, շաղակրատությունը ներգործություն չեն ունենում նրա գիտակցության վրա: Հետևաբար խրատամոլության հեղինակությունը մաշում է երեխայի կյանքը, ծնող-երեխա հարաբերությունը դարձնում ձանձրալի, տաղտկալի ու առաջ բերում կոնֆլիկտներ ընտանիքում: Այսպիսի ծնողները հավատացած են, որ նման քարոզներում է մանկավարժության գլխավոր իմաստությունը: Բայց չափից ավելի կարգադրությունները և մշտական հսկողությունը կարող է առաջացնել անհնազանդություն, ագրեսիա, լարվածություն, կոնֆլիկտներ և ծնողը ստիպված կիրառում է պատժի տարբեր ձևեր. զրկել գրպանի գումարից, զրկել երեկույթներից,

արգելել գնալ կինո ընկերների հետ, ձեռքից վերցնել բջջային հեռախոսը և այլն: Պատիժները ինքնին օգուտ չեն բերում: Լավ ընտանիքներում պատիժներ չեն լինում: Պետք է ստուգել, թե ինչու դիմադրության հանդիպեց մեր կարգադրությունը, գուցե ինչ որ բանում մենք ենք մեղավոր, ինչ որ բան սխալ ենք արել ժամանակին:

Շատ ծնողներ համոզված են, որ երեխաների սիրուն արժանանալու համար անհրաժեշտ է ամեն մի քայլափոխում երեխաներին ցույց տալ իրենց ծնողական սերը, ասել քնքուշ խոսքեր, փառաբանել, անվերջ համբուրել, գովել հյուրերի մոտ, պատմել այդ մասին ծանոթներին: Երեխան սուզվում է քնքուշ զգացմունքների ծովը, նրա մեջ աճում է եսամոլը, նա հասկանում է, որ մայրիկին ու հայրիկին կարելի է խաբել, քնքուշ խոսքեր ասել, փքվել, կեղծել, ցույց տալ իբր նեղացել է և հասնել իր ուզածին քնքուշ արտահայտություններ անելով: Այդպիսի երեխան դառնում է եսամոլ, ուրիշի նկատմամբ չկա համակրանք, չկա ընկերասիրություն ու կարեկցանք: Երեխան դառնում է եսակենտրոն, կեղծավոր ու ստախոս: Այստեղ դարձյալ տուժում են ծնողները, որովհետև երեխան նրանց նայում է որպես սպառման աղբյուրի և իր պահանջները բավարարողի: Եվ որպեսզի ընդհարումներ և կոնֆլիկտներ չլինեն տանը, ծնողները ոչինչ չեն խնայում, որ ժլատ չերևան, որ պահեն ընտանեկան խաղաղությունն ու անդորրը: Շուտով երեխան սկսում է ասպարեզ բերել իր անհարկի պահանջների, քմահաճույքների, մանկական ցանկությունների շարանը:

Հնարավորության դեպքում, հասկանալի է, պետք է խրախուսել երեխային, ոգևորել, լավ խոսքեր ասել, բայց կաշառել, նշանակում է ընտրել հեղինակության ամենաանբարոյական տեսակը, երբ հնազանդությունը գնվում է նվերների, խոստումների, փողի տեսքով՝ կլսես քեզ համար թանկ հեռախոս կառնեմ, կլսես՝ կգնանք կինո: Չի կարելի նախապես հայտնել խոստանալիքը կամ նվերը, գայթակղել խոստումներով՝ լավ սովորելու, բարձր գնահատական ստանալու, ծնողին օգնելու կամ դժվար աշխատանք կատարելու համար: Պատահում է հայրը հեղինակության մի տեսակի կողմնակից է, մայրը՝ մի ուրիշ: Խորամանկ երեխան դիվանագիտորեն խուսանավում է հայրիկի ու մայրիկի միջև: Ուրեմն, որը պետք է լինի իսկական ծնողական հեղինակությունը ընտանիքում. Գլխավոր հիմքը կարող է լինել ծնողների կյանքն ու աշխատանքը, նրանց վարքը, օրինակը, նրանց պատասխանատվությունը

ընտանիքի առաջ, ազնիվ ու գեղեցիկ նպատակները, լիակատար համերաշխությունը, իր արարքների համար հաշիվ տալը; Կարիք չկա ոչ մի արհեստական բան հնարել: Ուղղակի պետք է ծնողական գործը կատարել որքան հնարավոր է լավ, լինել երեխայի ընկերը, մտերմանալ հետը, շահել նրա վստահությունը, իմանալ ինչպես է նա վերաբերում դպրոցին, ուսուցիչներին, ինչի մեջ է դժվարանում, ինչպես է իրեն պահում դպրոցում: Այս ամենը պետք է իմանալ միշտ, երեխայի փոքր տարիքից սկսած: Մենք չպիտի անսպասելի կերպով իմանանք զանազան անախորժությունների ու ընդհարումների մասին, մենք պետք է գուշակենք ու կանխենք դրանք ժամանակին: Երբեմն այդ մասին սահազանգում է ուսուցիչը, հարևանը, դպրոցը : Եվ մենք զարմանում ենք, զայրանում ենք, որ դպրոցը ժամանակին չի տեղեկացրել, չի ահազանգել, չի հետևել, կապը չի պահել ծնողի հետ: Սկսվում են փոխադարձ մեղադրանքները, կոնֆլիկտները: Այստեղ չեն օգնի հովանավորչությունը, կեղծ պաշտպանությունը: Նախ խորհուրդ տվողը պետք է հեղինակություն վայելի աշակերտի մոտ, միննույն ժամանակ, նա պետք է իմանա, որ իրենից ինչ-որ բան է պահանջվում, որ մենք մտադիր չենք իր փոխարեն ամեն ինչ անել, վերցնել մեզ վրա իր պատասխանատվությունը: Նա լավ պիտի իմանա իր պարտականություններն ու իրավունքները, պատասխանատվությունը իր ծնողի, իր դպրոցի, հասարակության, իր երկրի, իր հայրենիքի հանդեպ:

Մեր նպատակը ազնիվ, սկզբունքային, հայրենասեր քաղաքացի դաստիարակելն է, ով գնահատում է իր հայրենիքը, իր տունը, իր մշակույթը, իր ազգային արժեքները, պատրաստ է մնալ իր երկրում, ապրել, ստեղծագործել, շենացնել ու ուժեղացնել մեր վիրավոր հայրենիքը: Դրա համար մեր երկրի քաղաքացին պետք է դաստիարակվի ճիշտ ազդեցությունների այն ամբողջ հանրագումարով, որոնց մեջ աչքի ընկնող տեղ պետք է գրավի քաղաքական լայն դաստիարակությունը, ընդհանուր կրթությունը, գիրքը, հանրօգուտ աշխատանքը, հասարակական աշխատանքը: Այս ամենի հանրագումարը կտա կարգապահ, օրինապաշտ քաղաքացու կերպար, որը կարգապահության դաստիարակության ամբողջ աշխատանքի ընդհանուր արդյունք է:

Մեր օրերում իրադարձությունները այնքան արագ են փոփոխվում, որ կարևորվում է ճիշտ ու արագ կողմնորոշվելու կորողությունը ,ժամանակին կանգ առնելու, իրեն զսպելու կամքի դրսևորումը: Իսկ դա այնքան էլ հեշտ բան չէ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մեր հետազոտական աշխատանքը նվիրված ընտանեկան դաստիարակությանը և ընտանեկան կոնֆլիկտներին բերեց մի եզրահանգման՝ երեխայի դաստիարակությունը պետք է սկսել նրա կյանքի առաջին տարիներից: Իսկ հայտնի Բենջամին Սփոքը գտնում էր, որ երեխային պետք է դաստիարակել այն ժամանակից սկսած, երբ նա քնում է ոչ թե հորիզոնական, այլ ուղղահայաց դիրքով: Երեխայի դաստիարակությունը նորանոր մեթոդների կիրառում և փորձարկում չէ:

Երեխան պետք է մեծանա ընտանեկան համերաշխության, ջերմության, սիրո մթնոլորտում: Եթե բաց թողնենք ճիշտ ժամանակը, ստիպված պետք է լինենք զբաղվել երեխայի վերադաստիարակությամբ, որը անհամեմատ դժվար և անօգուտ աշխատանք է:

Ծնողները պետք է ունենան դաստիարակչական աշխատանքի նպատակ և ծրագիր, դրա համար ծնողներն էլ պետք է լինեն դաստիարակված, լինեն լավ քաղաքացի և իրենց սեփական օրինակով կառուցեն օրինակելի ընտանիք:

Հարկավոր է ամենախիստ պահանջներ ներկայացնել սեփական վարքի նկատմամբ, որովհետև երեխան ոչ միայն մեր ուրախությունն է, այլև վաղվա քաղաքացին, և մենք պատասխանատու ենք մեր երկրի վաղվա օրվա համար:

Հարկավոր չէ հույս դնել որևէ դեղատոմսի վրա, հորինել տարբեր հնարքներ և ձևեր: Այդ հարցին պետք է մոտենալ լուրջ, պարզ, անկեղծ, առանց ձևականությունների:

Հարկավոր է կարողանալ ղեկավարել երեխային, այլ ոչ թե նրան հեռու պահել կրանքից:

Պետք է ճիշտ կազմակերպել երեխայի կյանքը, նրա առօրյան, ռեժիմը: Պետք է երեխայի վրա դնել փոքր պարտականություններ և հետևողական լինել դրա կատարմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մակարենկո Ա., Ընտանեկան դաստիարակության մասին, Երևան, 1985:
2. Սուխովինսկի Վ., Դաստիարակության գործընթացի էությունը, Մոսկվա 1958:
3. Նալչաջյան Ա., Ընտանիքի հոգեբանություն, Երևան, 2001: